96. ԻՐԵՔ ՔԻՐԸ

Ըլըմ ա լըմ չի իրեք քիր. սըհանք մի զատ էլա ունենըմ չեն, իրանք իրանց քըրտընքովը ապրըմ են։ Մինը մանըմ ա, մինը կյրզըմ ա, մինն էլ կյոռծըմ ա ու ծախըմ են, յոլա քյընըմ։ Մըհետ էլ թաքավըերը հրաման ա տալըի, թե իրեք օր պըետկ ա իմ քաղաքըմը մը տըեղ էլա քըշերը լիս չի կըպցընեն։ Ու ինքը շորերը փոխըմ ա վազիրի հետ ման ա կյալի, տըենա ո՞վ չի իրան հըրամանը կատարըմ։ Տըհանք քյուչենովը ման կյալով, ման կյալով քյընըմ են։ Մըհել տըենըմ են հըրես մի քյուչըմ լիս ա ըեվըմ, տըհանք մոտանըմ են ակոշկիցը մրտիկ անըմ, տըենըմ են հըրես իրեք սուրուն ախչիկ՝ մինը մընիցը լավը, հա՛մ զըրից են անըմ, հա՛մ էլ աշխատըմ են, մինը կյըզըմ ա, մինը մանըմ ա, մին էլ կյոռծըմ ա։

Սըհանք էնքան իրար նման են, վըեր քոռն էլ կասի՝ քըվերտինք են։ Մեծ քիրը ասըմ ա. «Հըմի ես կուզի թաքավըերի մըհար ճաշ եփողի կընիկն ի ըլել. ինչ թաքավըերի մրհար էր եփել, նրրանից էլ ինձ մըհար կըպիրեր, ես էլ կուտըի»։ Միչնակ քիրն էլ ասրմ ա. «Էրնա՛կ, ես էլ թաքավըեոի շոր կարողին ի առել. ինչ վրեր նըհանց մըհար էր կարել, էն ավել մնացած կըտորներիցը ես էլ ինձ մըհար ի կարել»։ Պուճուր քիրն էլ ասըմ ա. «Էրնակ ես էլ թաքավըերին ի առել, հետը բաղնիք ի քյացել, ըղանալուց եդր թաքավըերը փմ փափուչնին տըրել էր ղաքիս, ես էլ զարափաթով նրան սիլա ի տըվել»։

Թաքավըերը վազիրին ասըմ ա. «Մացա՞ր, ինչ խոսըցան»։ Ասըմ ա. «Հա՛»։ Ասըմ ա. «Դե՛, էս ասածնին չիմ կյըրի, էս փողոցրի համարն էլ վրե կալ, էքուց սըհանց կանչիլ դենք պալատ»։

Էքսը թաքավորերը տրհանց կանչրս ա պալատ, ասրմ ա. «Խի՞ նք իմ հրրամանը խանդարրմ, տուք դյիդրմ չե՞ք, վրեր թաքավրերի հրրամանը չկատարողը կրպատրժվրի»։ Ասրմ են. «Թաքավրերը ապրած կենա, բա վրե՞նց ապրենք. էն ա քշեր-ցիրեկ աշխատրմ ենք, չրրշարվրմ, անչախ-անչախ տուտը տրտան ենք հսցնրմ, յոլա քյընրմ»։ Ասրմ ա. «Բա՞ էրեգ քրշեր ըշխատելիս էն ի՞նչ խոսիք»։

Ասրմ ա. «Հե՛չ, դատ չենք խոսրցել»։ Թաքավրերը ասրմ ա. «Չէ՛ ասեցեր, ի՞նչ խոսրցել ենք, ըստեղ կյրրած ա»։

Մեծ բիրը ասրմ ա. «Դե՛, ի՞նչ անենք, թաքավրերը ապրած կենա, Էրդյան բրշեր ա՝ քուններուս չտանրիլու մրհար տառտակ-տառտակ կրլխներնուցրս տուս ենք տրվել. շա՞տ ա մրտերնուս, թե ինչ ենր խոսցել Էտ սաղ քոշերը»։ Ասրմ ա. «Չէ՛, էրեգ քրշերվա դրրիցր մրտիտ կրի»։

Ասրմ ա. «Դե՛, թաքավրեր շան, սոված հավը ի՞նչ կուդրի. կուտ կուդրի չէ՞, հո ճուր չի ուզրի, դե մրենք էլ քյասիր ըխչկերք ենք. մրեր սրրտի ուղածը ղրրից ենք արել, ես սրհե-սրհե ասրեցի»։

Թաքավրերը ասրմ ա. «Սրրան տարեք տրվեք պովրրին, ասեցեր, վրեր թաքավրերը հրրամայել ա, վրեր ըսօրվանից քու կընիկն ա սա»։

Էն մի քրվորը ասրմ ա. «Բա տու ի՞նչ ասրեցիր»։ Ասրմ ա. «Ես էլ սրհե-սրհե ասրեցի»։ Ասրմ ա. «Սրրան էլ տարեք տրվեք էն շոր կարողին»։

Պուճուր քրվորը ասրմ ա. «Բա տու ի՞նչ ասրեցիր»։ Սա վախրմ ա, ասրմ չի, թե ինչ ա ասրել. վրեր շատ տրեղը նեղրմ են, ասրմ ա. «Հա՛, դե ես էլ սրհե ասրեցի»։

Թաքավրերը ասրմ ա. «Սրրան քառասուն օր բանտարկեցեք»։

Էս պուճուր քրվորը բանտարկրմ են, սա եռեսուն օխտը օր նստրմ ա, մրնրմ ա իրեք օր, մի օր էլ էս բանտրի պահակին խընթրրմ ա ասրմ ա. «Ինձ էրկու ժամով թող արա քյնամ մի տրեղ կյամ, քեզ էրկու վրեսկի կրտամ»։ Պահակն էլ ասրմ ա. «Եռեսուն օխտը օր նստել ա, իրեք օր ա մրնացել, հու իրեք օրվա մրհար փախչիլ չրդի.—ասրմ ա—քյընա՛»։

Էս ախչիկը կյալիս ա թուշ թաքավրերի պալատը, էտ տրոնապանը ասրմ ա. «Էս ո՞ւր ես քյընրմ»։ Ասրմ ա. «Էս ինչ վաղրիրի քոծն եմ, ինձ տուս ա արել, քյնրմ եմ բողոքեմ»։ Ասրմ ա.—«Դե՛ քյնա»։

Կյալիս ա պալատը մրտնրմ, մի վաղիր ա պրտահրմ, տրրա

Հետ զրից են անում, մրհել ասում ա. «Արի նարդի հաղ անենք»։ Ասում ա. «Արի՛»։

Տրհանք նարդի են հաղ անում, ախչիկը վազիրին տանում ա, ասում ա. «Ըստի կացի, ես հրրես կյալիս եմ»։ Ասում ա. «Քյնա, ճամփետ պահրմ եմ»։

Էտ ախչիկը կյալիս ա ըլետ մրտնում բանտը։ Էտ վազիրը ճամփա ա պահրմ ճամփա՝ տրենում ա էտ ախչիկը եկավվրեչ։ Տուս ա կյալի ման կյալի, կանչում, կանչում՝ օքմրի չիկա. էնքան կանչում ա, վրեր գյժվում ա։ Էտ էքսրն էլ ուրուշ օքմրի ա ըլմ, կյալիս ա տրրա հետ էլա նարդի հաղ անում, տանում, տրրան էլ ա բրրախում, կյալի։ Ըռավրետը տենում են՝ էտ մարթն էլ ա շաշվել։ Թաքավրերը մրնում ա ըրմացած, ասում ա. «Էս ի՞նչ պան ա, էս ռուգյու ես դեմ պահակութին անրիլ մի տրենամ էս ի՞նչ կա ըստեղեք»։ Ախչիկն էլ էտ օրը գյիդում ա, վրեը թաքավրերն ա։ Քյնում ա ծանոթ վազիրի կընդյա շորերը խնթրում, լավ հաքնում՝ ղրրթարվում ու կյալիս տուռը թակում ա, թաքավրերը տուռը պաց ա անում, տրենում ա մի սուրուն, մի լավ հրրիշտակ ախչիկ, վրեր վրե՛չ ուտրես, վրե՛չ խրմես՝ սրրան մրտիկ անես, քիչ ա մրնում հրլի խելքը քյնա։ Շըշկրլվում ա, էլ կարում չի հրրցնի, թէ՝ ո՞վ ես, ընչի՞ ես եկել։ Ախչիկը սկըսում ա թաքավրերի հետ քաղցր զրրից անրիլը, մրհել թաքավրերին ասում ա. «Նարդրի չիկա, մի քիչ զրաղվենք իրար հետ»։ Թաքավրերը ասում ա. «Կա՛, խընթրրեմ, եթե հաղ անրիլը գյիդում ես, արի՛, իրար հետ հաղ անենք»։ Ախչիկը ասում ա. «Ը՞նչի վրրա հաղ անենք»։ Թաքավրերը ասում ա. «Էսքան վրեսկու»։ Ասում ա. «Բա վրեր ես էտքան վրեսկի չի ունեմ»։

Թաքավրերը ասում ա. «Եթե տու ինձ տարար, ես քեզ էսքան վրեսկի տամ, եթե ես քեզ տանեմ, տու իմն ես, պրետկ ա ինձ առնրես»։ Ախչիկը զաստի ասում ա. «Բա վրենց կրլի մի անքամից տրհե պան»։ Թաքավրերը ասում ա. «Կրլի, խի՞ չի ըլիլ»։

Սկսում են հաղ անրիլը։ Ախչիկը զաստի հիլ ա անում թաքավրերը իրան տանում ա ու էլ հիլ չի անում քյնա, ասում ա. «Իրար հետ քննենք»։ Ախչիկը ասում ա. «Թաքավրերը ապրած կենա, բա ես կրեխտոտ վրե՞նց քեզ հետ քընեմ, իրար հետ քյնանք բաղնիք, լրղանանք թըմրղվեմ, նոր կըշտիտ կըքընեմ»։

Սրհանք իրար հետ քյնում են բաղնիք լրղանում, թաքավրերը, վրեր տրրան տրկլոր բաղնիքումը տրենում ա, քիչ ա մրնում խելքը թրոցնրի էտ ըխչկա սուրունութենի վրրա. վրենց վրեր մի երգրնքի հրրիշտակ ըլի, էնքան սուրուն ա, էնքան լավն ա, վրեր սրհե ուզրմ

ա կրլխովր պրտիտ կյա՛, քիչ ա մընում ղաքին քոծութին անրի։ Սրհանր իրար հետ լավ լըղանում են պըրծընում, ախչիկը կյա՛լիս ա նրստում ստոլին, թաքավրերին ասում ա. «Մի փափուշնրիս պի»։ Թաքավրերը փափուշնին պիդում ա ըխչկա ղաքին տընում, ասում ա. «Հարի՛, իմ ասսված ջան»։ Ախչիկը կամաց հաքնում ա ու հետն էյ մի կակող սիլա՛ ա տալրի հանա՛քով։ Մըհել ղաստի վեր ա ընդնում ակոշկի վրրա՛, շուշեն ճա՛րթում ու կուռը կըտրում ա. մրխեյախ տրեղ արինը սկսում ա չըռալը։ Թաքավրերը սիպտակ շորով փրթաթում ա ու իրան կըռնի բա՛ղրա՛նդը հանում ա ու վըրերնուց կապում։

Տրհանը կյա՛լիս են տուն իրար հետ ուտում, խմում են ու իրար հետ բրնում են, թաքավրերի քրնած վախտը էտ ախչիկը վրեր ա կենում թաբուն կյա՛լի ըլետ իրան տրեղը։ Թաքավրերը ըխչկանը հրրցրրել էր, ասրել էր. «Անրմրտ ի՞նչ ա»։ Ախչիկը ասրել ա. «Իմ անրմրն ա՝ Սա՛նա՛մ վառվրեցի»։

Թաքավրերը քընից վըեր ա կենում, տրենում ա ախչիկը կա վրեչ, էնքան ասում ա. «Վա՜յ, Սա՛նա՛մ վառվրեցի, «Սա՛նա՛մ վառվրեցի»։ Էնքան ա տրհե կանչում, վրեր ինքն էլ ա շա՛շվում։ Կյա՛լիս են տրենում թաքավրերը էս հալումը, ասում են. «Էտ ի՞նչ ա պրատահրեյ»։ Թաքավրերը ասում ա. «Սրհե-սրհե պա՛ն պրտահեց, ղյիդում չեմ էրաղ էր, թե հըրաշք. էս էլ իրեք մարթի կըլխին տրհե ուին պիրավ»։

Էտ բոավրեա ըխչկա քառասուն օրը թըմամում ա, կյա՛լիս են ըխչկանը տանում են, վրեր կախ անեն։ Թաքավրերին տընում են Ֆայատնրմը տանում ընդի, վրեր ինքն էլ տրենա։ Ըխչկանը պիրում են պցրցնում էտ կախաղանի տակը, ասում են. «Դե՛ քու վրերչի խոսրը ասա»։

Ախչիկը խոսում չի, մրենակ սուս ու փուս սկսում ա իրան շորերը հանրիր, ժողովուրթն էլ դյիդում ա, թե էս ախչիկը վախից դլրժվրել ա։ Ախչիկը վրեր շորերը հանում ա, թաքավրերը իրան բա՛ղրա՛նդը բրրա՛վեցրդ ա անում ու ծրվում ա. «Ըհրրես իմ Սա՛նա՛մին բրթա՛, պիրեք իմ կուշտը, փորցեք վրեչ տըրա՛ն ծրեռը տաք, պիրեք իմ կուշտը»։

Ըխչկանը պիրում են թաքավրերի կուշտը. թաքավրերը քիչ ա մընում, թե խելքը քրցի։ Սկըսում ա տրրա՛ն փրթաթվրիլը, խըտրտիլը, ժրդովուրթն էլ մընացել ա ոյելացած, թե էս ի՞նչ պա՛ն ա։ Ըստեղ ախչիկը պատմում ա՝ սրհե՛, սրհե՛ պա՛ն ա ըլել իմ ու թաքավրերի մեչ. ըստեղ կըլխի են ընդյնում, վրեր թաքավրերը սիրա-

հարվել ա էտ ըխչկա վրա։ Պիրում են էտ ըխչրկանը պըսակում են թաքավրերի հետ ու օխտը օր, օխտը քրշեր հըրսանիք անում, ուտում, խըմում, քյեփ անում։

Իրանք հասնում են իրանց մուրազին, տուք էլ հասնեք ձըներ մուրազին։